Համաձայն տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ 19.06.2023թ. տեղեկանքների՝ Արմեն Գուլոյանի հարկային պարտավորությունները ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի նկատմամբ ընդհանուր կազմում են **615.217 /վեց հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամ,** որից 161.890 /մեկ հարյուր վաթսուներեկ հազար ութ հարյուր իննսուն/ ՀՀ դրամը՝ որպես 35DX989 հաշվառման համարանիշի, BMW 525 I մակնիշի, WBAHD51000BG06714 նույնականացման համարի փոխադրամիջոցի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (149.400 /մեկ հարյուր քառասունինը հազար չորս հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 12.490 /տասներկու հազար չորս հարյուր իննսուն / ՀՀ դրամը՝ որպես տույժ), 263.512 /երկու հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր տասներկու/ ՀՀ դրամը՝ որպես

նույն փոխադրամիջոցի՝ 2017-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (195.050 /մեկ հարյուր իննսունհինգ հազար հիսուն/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 68.462 /վաթսունութ հազար չորս հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), 73.143 /յոթանասուներեք հազար մեկ հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամը՝ որպես 35ZS949 հաշվառման համարանիշի, BMW 520 I մակնիշի, WBAHB51060GH06485 նույնականացման համարի փոխադրամիջոցի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (67.500 /վաթսույոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 5643 /հինգ հազար վեց հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), 59.258 /հիսունինը հազար երկու հարյուր հիսունութ/ ՀՀ դրամը՝ որպես նույն փոխադրամիջոցի՝ 2019-2020 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 14.258 /տասնչորս հազար երկու հարյուր հիսունութ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), 57.414 /հիսույոթ հազար չորս հարյուր փասնչորս/ ՀՀ դրամը՝ որպես 37FM267 հաշվառման համարանիշի, BMW 520 I մակնիշի, WBADM11030GP02571 նույնականացման համարի փոխադրամիջոցի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (54.375 /հիսունչորս հազար երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 3039 /երեք հազար երեսունինը/ ՀՀ դրամը՝ որպես տույժ):

2023 թվականի հունիսի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի օգոստոսի 4-ին իրականացվել է վարչական վարույթի լուծման փուլը, որին մասնակցելու նպատակով Արմեն Գուլոյանին հասցեագրված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 28.06.2023 թվականի թիվ 1977 և 28.07.2023 թվականի թիվ 2346 ծանուցումներն ուղարկվել են փոստով /փոստային առաքանին հետ է ստացվել «չպահանջված» գրառմամբ/, ինչպես նաև ծանուցվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչարարություն հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով azdarar.am կայքում հրապարակելու միջոցով, սակայն Արմեն Գուլոյանը չի ներկայացել լուծմանը, ուստի վարչական վարույթի լուծման իրականացվել են վերջինիս բացակայությամբ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ «հարկ վճարող՝ կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն»:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի՝ «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց

յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով»:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 50-րդ, 51-րդ և 53-րդ գլուխների պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 88-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն Գուլոյանին /հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Մարտի 8-ի փողոց, 27 տուն հասցեում, ՀՏՀ 2905880147/ հասցեագրվել է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանի 28.06.2023 թվականի թիվ 1977 և 28.07.2023 թվականի թիվ 2346 ծանուցումները /փոստային առաքանի՝ LO110168825AM և LO108976586AM /, որոնք ուղարկվել են փոստային եղանակով, ինչպես նաև հրապարակվել են azdarar.am ինտերնետային կայքէջում հրապարակելու միջով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2023 թվականի օգոստոսի 4-ի արձանագրությունը՝ որոշում եմ.

1. Քաղաքացի Արմեն Գուլոյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի գանձել ընդհանուր **615.217 /վեց հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր տասնյոթ/ ՀՀ դրամ**, որից 161.890 /մեկ հարյուր վաթսուներեկ հազար ութ հարյուր իննսուն/ ՀՀ դրամը՝ որպես 35DX989 հաշվառման համարանիշի, BMW 525 I մակնիշի, WBAHD51000BG06714 նույնականացման համարի փոխադրամիջոցի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (149.400 /մեկ հարյուր քառասունինը հազար չորս հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 12.490 /տասներկու հազար չորս հարյուր իննսուն / ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191022/ և 263.512 /երկու հարյուր վաթսուներեք հազար հինգ հարյուր տասներկու/ ՀՀ դրամը՝ որպես նույն փոխադրամիջոցի՝ 2017-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (195.050 /մեկ հարյուր իննսունհինգ հազար հիսուն/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 68.462 /վաթսուուր հազար չորս հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191022/, 73.143 /յոթանասուներեք հազար մեկ հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամը՝ որպես 35ZS949 հաշվառման համարանիշի, BMW 520 I մակնիշի, WBAHB51060GH06485 նույնականացման համարի փոխադրամիջոցի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (67.500 /վաթսույոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 5643 /հինգ հազար վեց հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), 59.258 /հիսունինը հազար երկու հարյուր հիսունուր/ ՀՀ դրամը՝ որպես նույն գույքի՝ 2019-2020 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (45.000 /քառասունհինգ հազար/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 14.258 /տասնչորս հազար երկու հարյուր հիսունուր/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191022/, 57.414 /հիսունյոթ հազար չորս հարյուր տասնչորս/ ՀՀ դրամը՝ որպես 37FM267 հաշվառման համարանիշի, BMW 520 I մակնիշի, WBADM11030GP02571 նույնականացման համարի փոխադրամիջոցի՝

2021-2023 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (54.375 /հիսունչորս հազար երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 3039 /երեք հազար երեսունինը/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191022/:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշման ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 485-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արսեն Սամվելի Հարությունյանը /հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Մայիսյան փողոց, 12/1 տուն հասցեում, ՀՇՀ 2805940350/՝ հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի հունիսի 19-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ 19.06.2023թ. տեղեկանքների՝ Արսեն Հարությունյանի հարկային պարտավորությունները ընդհանուր կազմում են **433.530 /չորս հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ**, որից 164.639 /մեկ հարյուր վաթսուներորս հազար վեց հարյուր երեսունինը/ ՀՀ դրամը՝ որպես 34TC079 հաշվառման համարանիշի, BMW 325 I մակնիշի, WBACB31030FD78902 նույնականացման համարի փոխադրամիջոցի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (149.400 /մեկ հարյուր քառասունինը հազար չորս հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 15.239 /տասնհինգ հազար երկու հարյուր երեսունինը/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), 268.891 /երկու հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամը՝ որպես նույն փոխադրամիջոցի՝ 2017-2020 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (199.200 մեկ հարյուր իննսունինը հազար երկու հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 69.691 /վաթսուինը հազար վեց հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ):

2023 թվականի հունիսի 19-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի օգոստոսի 3-ին իրականացվել է վարչական վարույթի լումների փուլը, որին մասնակցելու նպատակով Արսեն Հարությունյանին հասցեագրված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի

ղեկավարի 28.06.2023 թվականի թիվ 1972 և 28.07.2023 թվականի թիվ 2350 ծանուցումներն ուղարկվել են փոստով /փոստային ատոաքանի LO108704364AM, հետ է ստացվել «չպահանջված» գրառմամբ/, ինչպես նաև ծանուցվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչարարություն հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով azdarar.am կայքում հրապարակելու միջոցով, սակայն Արսեն Հարությունյանը չի ներկայացել լուսմներին, ուստի վարչական վարույթի լուսմներն իրականացվել են վերջինիս բացակայությամբ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ «հարկ վճարող՝ կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն»:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի՝ «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով»:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 50-րդ, 51-րդ և 53-րդ գլուխների պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 88-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արսեն Հարությունյանին /հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Մայիսյան փողոց, 12/1 տուն հասցեում, ՀՇՀ 2805940350/ հասցեագրվել է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանի 28.06.2023 թվականի թիվ 1972 և 28.07.2023 թվականի թիվ 2350 ծանուցումները, որոնք ուղարկվել են փոստային եղանակով, ինչպես նաև հրապարակվել են azdarar.am ինտերնետային կայքէջում հրապարակելու միջոցով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2023 թվականի օգոստոսի 3-ի արձանագրությունը՝ որոշում եմ.

1. Քաղաքացի Արսեն Սամվելի Հարությունյանից հօգուտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի գանձել ընդհանուր **433.530 /չորս հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր երեսուն/ ՀՀ դրամ**, որից 164.639 /մեկ հարյուր վաթսուներորս հազար վեց հարյուր երեսունինը/ ՀՀ դրամը՝ որպես 34TC079 հաշվառման համարանիշի, BMW 325 I մակնիշի, WBACB31030FD78902 նույնականացման համարի փոխադրամիջոցի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (149.400 /մեկ հարյուր քառասունինը հազար չորս հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 15.239 /տասնհինգ հազար երկու հարյուր երեսունինը/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), 268.891 /երկու հարյուր վաթսուութ հազար ութ հարյուր ինսուսմեկ/ ՀՀ դրամը՝ որպես նույնանուն գույքի՝ 2017-2020 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (199.200 մեկ հարյուր ինսուսինը հազար երկու հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 69.691 /վաթսուինը հազար վեց հարյուր ինսուսմեկ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191022/:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի

Հանրապետության վարչական դատարան՝ որոշման ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 486-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-689 հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 45-Ա որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Շառլ Տիրան-Թեքեյան փողոց 2/1 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկից 16,82 քմ մակերեսով թին 11 սենյական /կադաստրային ծածկագիր՝ 04-069-0056-0155/ անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ որպես Մուսալեռ գյուղի 1140 փոստային բաժանմունք օգտագործելու, փոստային ծառայության գործունեություն ծավալելու նպատակով:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր՝ անորոշ ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ՝

ԳՈՐ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 487-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Մամիկոն Պարզևի Կարապետյանը /հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Րաֆֆու փողոց, 25 տուն, ՀԾՀ՝ 1301601985/, հանդիսանալով անշարժ գույքի հարկ, գույքահարկ և հողի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ, գույքահարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի հունիսի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, 2086 զեկուցագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների՝ ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Րաֆֆու փողոց 25 հասցեում գտնվող անշարժ գույքն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Գրետա Սերյոժայի Կարապետյանին /ՀԾՀ 6707630679/, Մամիկոն Պարզևի Կարապետյանին /ՀԾՀ 1301601985/, Էդվարդ Մամիկոնի Կարապետյանին /ՀԾՀ 2710860597/ և Արմեն Մամիկոնի Կարապետյանին /ՀԾՀ 1709850680/, որի համար ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի նկատմամբ վերջիններիս հարկային պարտավորությունները ընդհանուր կազմում են **190.516 /մեկ հարյուր իննսուն հազար հինգ հարյուր տասնվեց/ ՀՀ դրամ**, որից 16.940 /տասնվեց հազար ինը հարյուր քառասուն/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0047-0012 կադաստրային ծածկագրով 0,084 հա մակերեսով հողամասի և 04-094-0047-0012-001 կադաստրային ծածկագրով անհատական բնակելի տան անշարժ գույքի գծով՝ 2021-2023 թվականների համար 12.06.2023թ. դրությամբ հաշվարկված պարտավորության գումար (15.573 /տասնհինգ հազար հինգ հարյուր յոթանասուներեք հազար/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 1367 /մեկ հազար երեք հարյուր վաթսույնյոթ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), 16.885 /տասնվեց հազար ութ հարյուր ութսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0576-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված անշարժ գույքի գծով պարտավորության գումար (15.348 /տասնհինգ հազար երեք հարյուր քառասունութ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 1537 /մեկ

հազար հինգ հարյուր երեսունյոթ/ << դրամը՝ որպես տույժ), 88.315 /ութսունութ հազար երեք հարյուր տասնհինգ/ << դրամը՝ որպես քաղ. Մամիկոն Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0047-00152-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի գույքահարկի գծով՝ 2008-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (59.555 /հիսունինը հազար հինգ հարյուր հիսունհինգ/ << դրամը՝ որպես ապառք, իսկ 28.760 /քսանութ հազար յոթ հարյուր վաթսուն/ << դրամը՝ որպես տույժ) և 49.028 /քառասունինը հազար քսանութ/ << դրամը՝ որպես 04-094-576-004 կադաստրային ծածկագրով 0,281 հա մակերեսով ջրովի վարելահողի՝ 2009-2020 թվականների համար հաշվարկված հողի հարկի գծով պարտավորության գումար (30.804 /երեսուն հազար ութ հարյուր չորս/ << դրամը՝ որպես ապառք, իսկ 18.224 /տասնութ հազար երկու հարյուր քսանչորս/ << դրամը՝ որպես տույժ), 19.348 /տասնինը հազար երեք հարյուր քառասունութ/ << դրամը՝ որպես 04-094-047-012 կադաստրային ծածկագրով 0,085 հա մակերեսով տնամերձ հողամասի՝ 2015-2020 թվականների համար հաշվարկված հողի հարկի գծով պարտավորության գումար (13.584 տասներեք հազար հինգ հարյուր ութսունչորս/ << դրամը՝ որպես ապառք, իսկ 5764 /հինգ հազար յոթ հարյուր վաթսունչորս/ << դրամը՝ որպես տույժ):

2023 թվականի հունիսի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» << օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի օգոստոսի 3-ին հրավիրվել է վարչական վարույթի լսում, որին մասնակցելու նպատակով Մամիկոն Պարզևի Կարապետյանին հասցեագրված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 28.06.2023 թվականի թիվ 1971 և 19.07.2023 թվականի թիվ 2196 ծանուցումներն ուղարկվել են փոստով /փոստային առաքանի՝ LO109271094AM/, ինչպես նաև ծանուցվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» << օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» << օրենքի 29.1-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով azdarar.am կայքում հրապարակելու միջոցով, սակայն վարչական վարույթի նիստին չի ներկայացել, ուստի վարչական վարույթի լսումներն իրականացվել են վերջինիս բացակայությամբ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

<< Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ «հարկ վճարող է համարվում կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն»:

Համաձայն << հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով»:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 45-րդ գլխի պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 88-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Մամիկոն Կարապետյանին /հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Բաֆֆու փողոց, 25 տուն/ հասցեագրվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 1971 ծանուցումն ու 2023 թվականի հուլիսի 19-ի

թիվ 2196 ծանուցումը /փոստային առաքանի՝ AL109271094AM/, ինչպես նաև վերջինիս ծանուցվել է azdarar.am ինտերնետային կայքէջում տեղադրելու միջոցով, որով հրավիրվել է մասնակցելու վարչական վարույթի լուսններին, սակայն, ստանալով փոստային առաքանին՝ չի ներկայացել վարչական վարույթի նիստին, և վարչական վարույթի քննարկման մասին 2023 թվականի օգոստոսի 3-ի արձանագրությունը՝ **որոշում եմ**.

1. Համասեփականատերեր՝ Մամիկոն Պարզևի Կարապետյանից, Էդվարդ Մամիկոնի Կարապետյանից, Արմեն Մամիկոնի Կարապետյանից և Գրետա Սերյոժայի Կարապետյանից, յուրաքանչյուրին պատկանող մասով, հոգուտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջե գանձել **ընդհանուր՝ 190.516 /մեկ հարյուր ինսուն հազար հինգ հարյուր տասնվեց/ ՀՀ դրամ**, որից 16.940 /տասնվեց հազար ինը հարյուր քառասուն/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0047-0012-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (15.573 /տասնհինգ հազար հինգ հարյուր յոթանասուներեք հազար/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 1367 /մեկ հազար երեք հարյուր վաթսունյոթ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325005958/ և 88.315 /ութսունութ հազար երեք հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամը՝ որպես նույնանուն գույքի՝ 2008-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (59.555 /հիսունինը հազար հինգ հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 28.760 /քսանութ հազար յոթ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191501/, 16.885 /տասնվեց հազար ութ հարյուր ութսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0576-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (15.348 /տասնհինգ հազար երեք հարյուր քառասունութ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 1537 /մեկ հազար հինգ հարյուր երեսունյոթ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325005958/, 49.028 /քառասունինը հազար քսանութ/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-576-004 կադաստրային ծածկագրով հողի՝ 2009-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (30.804 /երեսուն հազար ութ հարյուր չորս/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 18.224 /տասնութ հազար երկու հարյուր քսանչորս/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191048/, 19.348 /տասնինը հազար երեք հարյուր քառասունութ/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-047-012 կադաստրային ծածկագրով հողի՝ 2015-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (13.584 տասներեք հազար հինգ հարյուր ութսունչորս/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 5764 /հինգ հազար յոթ հարյուր վաթսունչորս/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191048/:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ azdarar.am կայքի և/կամ Փարաքարի համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀՀ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ՝

ԳՐԻՍԱՐԻԲԵԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 488-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Վարոս Ռոբերտի Թադևոսյանը /հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Նարեկացու 6-րդ փողոց, 5 տուն հասցեում, ՀԾՀ՝ 3308640554/, հանդիսանալով անշարժ գույքի հարկի, գույքահարկի և հողի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի ապրիլի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, թիվ 1367 զեկուցագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի, հողի հարկի և անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների՝ ՀՀ Արմավիրի մարզի, Փարաքար համայնքի, Փարաքար գյուղի, Նարեկացու 6-րդ փողոց 5 հասցեում գտնվող անշարժ գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարոս Թադևոսյանին, որի համար անշարժ գույքի հարկի, գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի նկատմամբ 19.06.2023 թվականի դրությամբ ընդհանուր կազմում են **267.853 /երկու հարյուր վաթսուներեք ութ հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ**, որից 38.472 /երեսունութ հազար չորս հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0094-0007-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (35.313 /երեսունհինգ հազար երեք հարյուր տասներեք/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 3159 /երեք հազար մեկ հարյուր հիսունինը/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) և 195.035 /մեկ հարյուր ինսունհինգ հազար երեսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես գույքահարկի գծով 2008-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության

գումար (129.708 /մեկ հարյուր քսանինը հազար յոթ հարյուր ութ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 65.327 /վաթսուհինգ հազար երեք հարյուր քսանյոթ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) և 34.346 /երեսունչորս հազար երեք հարյուր քառասունվեց/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0094-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հողի հարկի գծով՝ 2008-2020 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (22.910 /քսաներկու հազար ինը հարյուր տասը/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 11.436 /տասանմեկ հազար չորս հարյուր երեսունվեց/ ՀՀ դրամը՝ որպես տույժ):

2023 թվականի ապրիլի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի օգոստոսի 3-ին հրավիրվել է վարչական վարույթի լսում, որին մասնակցելու նպատակով Վարոս Թադևոսյանին հասցեագրված Հայաստանի

Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 28.06.2023 թվականի թիվ 1975 և 28.07.2023 թվականի թիվ 2347 ծանուցումներն ուղարկվել են փոստով/փոստային առաքանի՝ LO108736289AM, LO110151178AM /, ինչպես նաև ծանուցվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով azdarar.am կայքում հրապարակելու միջոցով, սակայն վարչական վարույթի նիստին չի ներկայացել, ուստի վարչական վարույթի լսումներն իրականացվել են Վարոս Թադևոսյանի բացակայությամբ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ «հարկ վճարող է համարվում կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն»:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով»:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 45-րդ գլխի պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 88-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Վարոս Թադևոսյանին/հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Նարեկացի 6-րդ փողոց, 5 տուն, ՀՇՀ՝ 3308640554/հասցեագրվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 1975 ծանուցումն ու 2023 թվականի հուլիսի 28-ի թիվ 2347 ծանուցումը/փոստային առաքանի՝ LO108736289AM/, ինչպես նաև վերջինիս ծանուցվել է azdarar.am ինտերնետային կայքէջում տեղադրելու միջոցով, որով հրավիրվել է մասնակցելու վարչական վարույթի լսումներին, սակայն, ստանալով փոստային առաքանին՝ չի ներկայացել վարչական վարույթի նիստին, և վարչական վարույթի քննարկման մասին 2023 թվականի օգոստոսի 3-ի արձանագրությունը՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Վարու Ռոբերտի Թադևոսյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջե գանձել **ընդհանուր՝ 267.853 /երկու հարյուր վաթսուներեք ութ հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ**, որից 38.472 /երեսունութ հազար չորս հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամը՝ որպես ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար, Նարեկացու 6-րդ փողոց, 5 հասցեում գտնվող 04-094-0094-0007-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի համար անշարժ գույքի գծով՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (35.313 /երեսունհինգ հազար երեք հարյուր տասներեք/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 3159 /երեք հազար մեկ հարյուր հիսունինը/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325005958/, 195.035 /մեկ հարյուր իննսունհինգ հազար երեսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես նույն գույքի համար գույքահարկի գծով՝ 2008-2020 թվականների համար հաշվարկված

պարտավորության գումար (129.708 /մեկ հարյուր քսանինը հազար յոթ հարյուր ութ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 65.327 /վաթսունհինգ հազար երեք հարյուր քսանյոթ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ)/վճարման հաշվի համար՝ 900325191501/ և 34.346 /երեսունչորս հազար երեք հարյուր քառասունվեց/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0094-0007 կադաստրային ծածկագրով հողի՝ 2008-2020 թվականների համար հաշվարկված հողի հարկի գծով պարտավորության գումար (22.910 /քսաներկու հազար ինը հարյուր տասը/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 11.436 /տասնմեկ հազար չորս հարյուր երեսունվեց/ ՀՀ դրամը՝ որպես տույժ)/վճարման հաշվի համար՝ 900325191048/:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ azdarar.am կայքի և/կամ Փարաքարի համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ՝

ԳՈՐ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 489-Ա

ՇԱՀՍԱՆԱՄ ՆԱՀԱՊԵՏԻ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, հիմք ընդունելով «ԽԱԶՎԱՀԱՆ» ՍՊԸ-ի կողմից տրված շինության՝ կցակառույցի վերաբերյալ դրական եզրակացությունը, տրված 2022 թվականի նոյեմբերի 29-ին, ՀՀ կադաստրի կոմիտեի կողից տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2022AAHUCX), նկատի ունենալով, որ կցակառույցը որևէ բացասական կերպով չի ազդում շենքի կրողունակության և սեյսմակայունության վրա, պիտանի է բնականոն շահագործման և վտանգ չի սպառնում մարդկանց կյանքին ու առողջությանը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և սեփականատեր Շահսանամ Նահապետի Չիլինգարյանի 2023 թվականի հուլիսի 20-ի N 2876 դիմումը. **որոշում եմ՝**

- Օրինականացնել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող Շահսանամ Նահապետի Չիլինգարյանին սեփականության իրավունքով պատկանող, Վ. Մամիկոնյան փողոց 5-րդ շենքի N 7 բնակարանին կից 17,2 քառակուսի մետր մակերեսով կցակառույցը, համաձայն «ԿԱՐԵՆ ՄԱԶԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների հատակագծի:
- Ինքնական կառույցի օրինականացման համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 817,5 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 14 061 (տասնչորս հազար վաթսուոմեկ) ՀՀ դրամ:
- Բնակարանի հասցեն թողնել անփոփոխ. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Թաիրով, Վ. Մամիկոնյան փողոց 5-րդ շենք, N 7 բնակարան:
- Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարելու ուժի կորցում:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ

2023 թ. օգոստոսի
գ.Փարաքար



ԳՈՐ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 490-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված «Էրիկ Թովմասյան Էդվարդի» Ա/Ձ-ի կողմից, հողամասի սեփականատեր՝ Արման Հովակիմյանի 2023 թվականի հուլիսի 24-ի դիմումը. **որոշում եմ՝**

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի վարչական սահմաններում գտնվող Արման Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող 04-069-0027-0020 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (առանձնացվող հատված 1) 276.5 հա մակերեսով հողամասին տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Տիգրան Մեծի փողոց N 1 հողամաս:
2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (առանձնացվող հատված 2) 263.8 հա մակերեսով հողամասին տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մուսալեռ, Տիգրան Մեծի փողոց N 1/1 հողամաս:
3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ

2023 թ. օգոստոսի
գ. Փարաքար



ԳՐԱՍԱՐԻԲԵԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 491-Ա

ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի բաժանման սխեման տրված 2023 թվականի հուլիսի 28-ին «Ավագ Ավագյան Գագիկի» Ա/Ձ-ի կողմից, հողամասի սեփականատեր՝ Համայակ Ղազարյանի 2023 թվականի հուլիսի 21-ի դիմումը. **որոշում եմ՝**

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի վարչական սահմաններում գտնվող Համայակ Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող 04-082-0004-0006 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի կողմ 1-ին (առանձնացվող հատված 1) 0.054 հա մակերեսով հողամասին տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Պտղունք, Սոսեի փողոց N 11 հողամաս:

2. Նույն հողատարածքի՝ կողմ 2-ին (առանձնացվող հատված 2) 0.0525 հա մակերեսով հողամասին տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Պտղունք, Սոսեի փողոց N 11/1 հողամաս:

3. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ

2023թ. օգոստոսի
գ. Փարաքար



ԳՐՈՒ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 492-Ա

ՀԱՐԱՋԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները. որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած բնակիչներ՝ Համլետ Կլիմենտի Գրիգորյանին և Հրայր Իշխանի Կարապետյանին ցուցաբերել դրամական օգնություն, յուրաքանչյուրին 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով:
2. Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Գ/Կ՝

ԳՈՐ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

2023 թ. օգոստոսի 9
գ. Փարաքար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 493-Ա

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 447-Ա
ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հուլիսի 25-ին տրված գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-25072023-04-0170 որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 20-ի «Ինքնական կառուցված շինությունը համայնքային սեփականություն համարելու, օրինականացնելու, օտարելու և հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին» թիվ 447-Ա որոշումը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով շենքի շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը տրված 11 հուլիսի 2023թ.-ին «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից, հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից, ՀՀ

(չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023UDTDZW), շինությունը կատարած անձ Մամբրե Վարդանի Սարգսյանի 2023 թվականի հուլիսի 11-ի N 2693 դիմումը. որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող, 17.9 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող 17.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց շինությունը ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց 36 կիսակառույց շինություն (ծածկագիր 04094UCYJ8ZN):

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Մամբրե Վարդանի Սարգսյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունը, Մամբրե Վարդանի Սարգսյանին ուղղակի վաճառքով օտարել Արմավիրի մարզ, Փարաքար համայնքի, Փարաքար գյուղի Երևանյան փողոցի 36 հասցեում գտնվող 0,00179 հա մակերեսով հողամասը՝ առկա շինություններով:

4. 17.9 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել, որպես հասարակական կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր կիսակառույց շինության համար՝ 20 844 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 373 107,6 (երեք հարյուր յոթանասուներեք հազար հարյուր յոթ դրամ վաթսուն լումա) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:

6. Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը՝ 6834,3 դրամ, որը 17.9 քառակուսի մետրի համար կկազմի 122 333,97 (հարյուր քսաներկու հազար երեք հարյուր երեսուներեք դրամ իննսունյոթ լումա) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:»

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ

ԳՈՐ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

2023 թ. օգոստոսի
գ. Փարաքար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 494-Ա

ԱԶԱՏ ԱՔԳԱՐԻ ՄԱՆԱԿԱԶՅԱՆԻ ԵՎ ԱՐՈՒՍՅԱԿ ԱՔԳԱՐԻ ՄԱՆԱԿԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2023 թվականի մայիսի 28-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հուլիսի 31-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023DW9TWZ), հողամասի համասեփականատերեր Ազատ Արգարի Մանավազյանի և Արուսյակ Արգարի Մանավազյանի 2023 թվականի օգոստոսի 1-ի դիմումը. **որոշում եմ՝**

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Արովյան փողոցի 2 հասցեում գտնվող Ազատ Արգարի Մանավազյանին և Արուսյակ Արգարի Մանավազյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-030-0038-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 44,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 16,2 քառակուսի մետր արտաքին մակերեսով ծածկը, 1,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով կաթսայատունը, 7,8 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան և կաթսայատան համար կազմում է 1422 դրամ, 1 քառակուսի մետր ծածկի և պարսպի համար կազմում է 859,2 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 86 032,80 (ութանասունվեց հազար երեսուներկու դրամ ութանասուն լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի 900325003524 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Պ/Կ

2023 թ. օգոստոսի
գ. Փարաքար

09



ԳՈՒ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

Handwritten signature in blue ink.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 495-Ա

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արտաշես Սամվելի Հարությունյանը /հաշվառված՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Փարաքար բնակավայր, Ի. Գասպարյան փողոց, 2 տուն հասցեում, ՀԾՀ 3909870643/՝ հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի հունիսի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, թիվ 2086 զեկուցագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման հարցի ընտրության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ընտրության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ 19.06.2023թ. տեղեկանքների՝ Արտաշես Սամվելի Հարությունյանի հարկային պարտավորությունները ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի նկատմամբ ընդհանուր կազմում են **386162 /երեք հարյուր ութսունվեց հազար մեկ հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ**, որից 187141 /մեկ հարյուր ութսունյոթ հազար մեկ հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամը՝ որպես 35TV770 հաշվառման համարանիշի, BMW 535 I մակնիշի, WBAHD110602645927 նույնականացման համարի փոխադրամիջոցի՝ 2018-2020 թվականների համար 19.06.2023թ. դրությամբ հաշվարկված հարկային պարտավորության գումար (139.858 /մեկ հարյուր երեսունինը հազար ութ հարյուր հիսունույթ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 47283 /քառասունյոթ հազար երկու հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), 199021 /մեկ հարյուր ինսունինը հազար քսանմեկ/ ՀՀ դրամը՝ որպես նույն փոխադրամիջոցի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (180600 /մեկ հարյուր ութսուն հազար վեց հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 18421 /տասնույթ հազար չորս հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ):

2023 թվականի հունիսի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի օգոստոսի 8-ին իրականացվել է վարչական վարույթի լուսնների փուլը, որին մասնակցելու նպատակով Արտաշես Հարությունյանին հասցեագրված ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 28.06.2023 թվականի թիվ 1976 և 28.07.2023 թվականի թիվ 2354 ծանուցումներն ուղարկվել են փոստով /փոստային առաքանիքներ՝ LO110168672AM և LO108710387AM/, ինչպես նաև ծանուցվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչարարություն հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով azdarar.am կայքում հրապարակելու

միջոցով, սակայն Արտաշես Հարությունյանը չի ներկայացել լուսմներին, ուստի վարչական վարույթի լուսմներն իրականացվել են վերջինիս բացակայությամբ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ «հարկ վճարող՝ կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն»:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասի՝ «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով»:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 50-րդ, 51-րդ և 53-րդ գլուխների պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 88-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արտաշես Հարությունյանին /հաշվառված՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Ի. Գասպարյան փողոց, 2 տուն հասցեում, ՀՇՀ 3909870643/ հասցեագրվել է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանի 28.06.2023 թվականի թիվ 1976 և 28.07.2023 թվականի թիվ 2354 ծանուցումները/փոստային առաքանիներ՝ LO110168672AM և LO108710387AM /, որոնք հրապարակվել են նաև azdarar.am ինտերնետային կայքէջում հրապարակելու միջով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչական վարույթի քննարկման մասին 2023 թվականի օգոստոսի 8-ի արձանագրությունը՝ որոշում եմ.

1. Քաղաքացի Արտաշես Հարությունյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի գանձել ընդհանուր **386162 /երեք հարյուր ութսունվեց հազար մեկ հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ**, որից 187141 /մեկ հարյուր ութսունյոթ հազար մեկ հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամը՝ որպես 35TV770 հաշվառման համարանիշի, BMW 535 I մակնիշի, WBAHD110602645927 նույնականացման համարի փոխադրամիջոցի՝ 2018-2020 թվականների համար 19.06.2023թ. դրությամբ հաշվարկված հարկային պարտավորության գումար (139.858 /մեկ հարյուր երեսունինը հազար ութ հարյուր հիսունույթ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 47283 /քառասունյոթ հազար երկու հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), 199021 /մեկ հարյուր ինսունինը հազար քսանմեկ/ ՀՀ դրամը՝ որպես նույն փոխադրամիջոցի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված պարտավորության գումար (180600 /մեկ հարյուր ութսուն հազար վեց հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 18421 /տասնութ հազար չորս հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), վճարման հաշվեհամար՝ 90032191022:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշման ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023 թ. օգոստոսի 10
գ. Փարաքար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 496-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԱՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի մարտի 16-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանք (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023DWR5JR), շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը, տրված 13.04.2023թ.-ին «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից, շինությունը կատարած անձ Արթուր Վոլոդյայի Մարտիրոսյանի 2023 թվականի հունիսի 6-ի N 1999 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի, Մերձավան գյուղում գտնվող, 99,0 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող 99,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «ԿԱՐԵՆ ՄԱՉԱՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, Մասիսի փողոց 2-րդ փակուղի 3/4 բնակելի տուն (ծածկագիր 04065MGNEJ4B):

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Արթուր Վոլոդյայի Մարտիրոսյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունները, Արթուր Վոլոդյայի Մարտիրոսյանին ուղղակի վաճառքով օտարել Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի Մասիսի փողոց 2-րդ փակուղի 3/4 հասցեում գտնվող 0,0099 հա մակերեսով հողամասը՝ առկա շինություններով:

4. 99,0 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակելի կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր բնակելի տան համար՝ 5907 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 584 793 (հինգ հարյուր ութանասունչորս հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:

6. Մեկ քառակուսի մետր հողամասի օտարման վճարը՝ 4441,8 դրամ, որը 99 քառակուսի մետրի համար կկազմի 439 738,20 (չորս հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր երեսունույթ դրամ քսան լումա) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի ֆոնդային եկամուտների 900325191139 հաշվեհամարին:

7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023 թ. օգոստոսի
գ. Փարաքար



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 497-Ա

ԿԱՐԱՊԵՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով շինության վերաբերյալ տեխնիկական եզրակացությունը տրված 2023թ-ի մայիսի 12-ին «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հուլիսի 3-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023K6CPUD), հողամասի սեփականատեր Կարապետ Անդրանիկի Հովհաննիսյանի 2023 թվականի հուլիսի 3-ի N 2526 դիմումը. **որոշում եմ՝**

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղի գտնվող Կարապետ Անդրանիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-009-0002-0033 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 27,1 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկուղը, 197,5 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան և բնակելի տան նկուղի համար կազմում է 1422 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 319 381.20 (երեք հարյուր տասնինը հազար երեք հարյուր ութանասունմեկ դրամ քսան լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Այգեկ բնակավայրի 900325155175 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

2023 թ. օգոստոսի 10
գ. Փարաքար



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 498-Ա

ԳԵՎՈՐԳ ԱՇՈՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԿՈՂՄԻՅ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) ենթակետով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2023 թվականի հունիսի 23-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի հունիսի 20-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023D6MXP9) և հողամասի սեփականատեր Գևորգ Աշոտի Բարսեղյանի 2023 թվականի հունիսի 26-ի N 2382 դիմումը. **որոշում եմ՝**

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Կոմիտասի փողոցի 22 հասցեում գտնվող Գևորգ Աշոտի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 04-030-0048-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 224,9 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, 22,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տան նկուղը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր բնակելի տան և բնակելի տան նկուղի համար կազմում է 1422 դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 351 518,40 (երեք հարյուր հիսունմեկ հազար հինգ հարյուր տասնութ դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի 900325003524 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023 թ. օգոստոսի
գ. Փարաքար

10



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 499-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

Քաղաքացի Արմենակ Սուրենի Բաբայանը /հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Վաղարշապատի փողոց, 14 տուն, ՀԾՀ՝ 2401610065/, հանդիսանալով անշարժ գույքի և հողի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ, գույքահարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի ապրիլի 20-ին թիվ 1367 զեկուցագրի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Վաղարշապատի 14 հասցեում գտնվող՝ 04-094-0047-0035-001 կադաստրային ծածկագրով անհատական բնակելի տունը և 04-094-047-035 կադաստրային ծածկագրով 0,074 հա մակերեսով տնամերձ հողամասը սեփականության իրավունքով պատկանու է Արմենակ Սուրենի Բաբայանին: 2021 թվականից նշված գույքի համասեփականատերեր են հանդիսնում Կարեն Արմենակի Բաբայանը /ՀԾՀ 2909860450/, Մարինե Արմենակի Բաբայանը /ՀԾՀ 5208900076/ և Կարինե Արմենակի Բաբայանը /ՀԾՀ 5910870084/: Գույքի համար անշարժ գույքի հարկի, գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 19.06.2023 թվականի դրությամբ ընդհանուր կազմում են **443.925 /չորս հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ**, որից **368.206 /երեք հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր վեց/ ՀՀ դրամը՝** որպես 04-094-0047-0035-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հարկ՝ 2010-2020 թվականների համար հաշվարկված գույքահարկի գծով պարտավորության գումար (245.329 /երկու հարյուր քառասունհինգ հազար երեք հարյուր

քսանինը/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 122.877 /մեկ հարյուր քսաներկու հազար ութ հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), **49.515 /քառասունինը հազար հինգ հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամը՝** որպես նույնանուն գույքի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված անշարժ գույքի հարկի գծով հարկային պարտավորության գումար (45.450 /քառասունհինգ հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 4065 /չորս հազար վաթսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), իսկ **26.204 /քսանվեց հազար երկու հարյուր չորս/ ՀՀ դրամը՝** որպես 04-094-047-035 կադաստրային ծածկագրով 0,074 հա մակերեսով տնամերձ հողամասի հողի հարկի գծով՝ 2009-2020 թվականների համար հաշվարկված (15.535 /տասնհինգ հազար հինգ հարյուր երեսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 10.669 /տասը հազար վեց հարյուր վաթսունինը/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) պարտավորության գումար:

2023 թվականի ապրիլի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի օգոստոսի 3-ին հրավիրվել է վարչական վարույթի լուսն, որին մասնակցելու նպատակով Արմենակ Սուրենի Բաբայանին հասցեագրված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 28.06.2023 թվականի թիվ 1978 և 19.07.2023 թվականի թիվ 2194 ծանուցումներն ուղարկվել են փոստով /փոստային առաքանի՞ն՝ LO108736670AM, LO110458995 AM/, ինչպես նաև ծանուցվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով azdarar.am կայքում հրապարակելու միջոցով Արմենակ Բաբայանը վարչական վարույթի նիստին չի ներկայացել, ուստի վարչական վարույթի լուսններն իրականացվել են վերջինիս բացակայությամբ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ «հարկ վճարող է համարվում կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն»:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով»:

Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 45-րդ գլխի պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 88-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Արմենակ Սուրենի Բաբայանին /հաշվառված՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Վաղարշապատի փողոց, 14 տուն, ՀԾՀ՝ 2401610065/ հասցեագրված ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 28-ի թիվ 1978 ու 2023 թվականի հուլիսի 17-ի թիվ 2194 ծանուցումները, որոնք հրապարակվել են նաև azdarar.am ինտերնետային կայքէջում տեղադրելու միջոցով, որով հրավիրվել է մասնակցելու վարչական վարույթի լուսններին, սակայն, ստանալով փոստային առաքանին՝ չի ներկայացել

վարչական վարույթի նիստին, և վարչական վարույթի քննարկման մասին 2023 թվականի օգոստոսի 3-ի արձանագրությունը՝ **որոշում եմ**.

1.Քաղաքացի Արմենակ Սուրենի Բաբայանից հոգուտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջե գանձել **ընդհանուր՝ 443.925 /չորս հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ, որից 368.206 /երեք հարյուր վաթսուներեք հազար երկու հարյուր վեց/ ՀՀ դրամը՝** որպես 04-094-0047-0035-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հարկ՝ 2010-2020 թվականների համար հաշվարկված (245.329 /երկու հարյուր քառասունհինգ հազար երեք հարյուր քսանինը/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 122.877 /մեկ հարյուր քսաներկու հազար ութ հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար 900325191501/ , **49.515 /քառասունինը հազար հինգ հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամը՝** որպես նույնանուն գույքի՝ 2021-2023 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (45.450 /քառասունհինգ հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 4065 /չորս հազար վաթսուներեք/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325005958/, իսկ **26.204 /քսանվեց հազար երկու հարյուր չորս/ ՀՀ դրամը՝** որպես 04-094-047-035 կադաստրային ծածկագրով հողի հարկ՝ 2009-2020 թվականների համար հաշվարկված (15.535 /տասնհինգ հազար հինգ հարյուր երեսունհինգ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 10.669 /տասը հազար վեց հարյուր վաթսուինը/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191048/:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց օրվանից երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ azdarar.am կայքի և/կամ Փարաքարի համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

4.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱԿԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 500-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1746-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ, ՀՀ Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին օրենքով, ընդունված 2019թ.-ի նոյեմբերի 19-ին N ՀՕ-225-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և միկրոռեզիդենս մակարդակի համակցված տարածական պլանավորման Արմավիր-8 նախագիծը հաստատելու մասին Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի N 19-Ա որոշմամբ, հիմք ընդունելով սեփականատեր Սարգիս Ժորժի Պերպերեանի 2023 թվականի հունիսի 10-ի N 2639 դիմումը, **որոշում եմ՝**

1. Սարգիս Ժորժի Պերպերեանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական N 31052023-04-0003), Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղում գտնվող 04-069-0105-0024 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.0318 հա մակերեսով հողամասը, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խաղող, (գտնվում՝ Մերձարաքսյան, 3-րդ կարգի խաղող՝ կադաստրային արժեքը՝ մեկ քառակուսի մետրի համար 493,25 դրամ) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա, որպես բնակելի կառուցապատման հող: Բնակելի տուն կառուցելու համար:

2. Փոփոխվող հողի կադաստրային արժեքների տարբերությունը (1 քառակուսի մետրին խաղողի համար 3948,55 դրամ,) 318 քառակուսի մետրի համար կազմում է 1 255 638,90 (մեկ միլիոն երկու հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր երեսունուր դրամ իննսուն լումա) ՀՀ դրամ, ինչը 60-օրյա ժամկետում պետք է վճարել Փարաքարի համայնքային, Մուսալեռ բնակավայրի բյուջե՝ Հայաստանի Հանրապետության

Ֆինանսների նախարարության գործառական վարչության 900325176130
հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը ճանաչել ուժը կորցրած:

3. Հողամասին տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Մուսալեռ,
Շառլ-Տիրան Թեքեյան փողոց թիվ 31/5 հողամաս (ծածկագիր 04069CF6HDHS):

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման
Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի
գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

5. Հետագա կառուցապատումն իրականացնել Հայաստանի Հանրապետության
քաղաքաշինության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան,
նախապես համաձայնեցված և հաստատված նախագծային փաստաթղթերի հիման
վրա Փարաքար համայնքի ղեկավարի կողմից տրված շինարարության թույլտվության
համաձայն:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել
վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով
Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2023 թ. օգոստոսի
գ. Փարաքար

11



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 501-Ա

ՀԱՐԱՋԱՏԻՆ ԿՈՐՅՐԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետով և հիմք ընդունելով Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի բնակիչ Սարգիս Գևորգյանի դիմումը. **Որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ընտանիքի անդամին կորցրած Մուսալեռ գյուղի Անի թաղամաս 1-ին շենք 10-րդ բնակարանի բնակիչ Սարգիս Համլետի Գևորգյանին ցուցաբերել 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ օգնություն:
2. Ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին՝ կատարել համապատասխան ձևակերպում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 թվականի N 502-Ա
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հաշվի առնելով, որ Ռուդիկ Շահբազյանը /ծնված՝ 06.04.1978թ., նույնականացման քարտ՝ 002973881, տրված՝ 04.11.2015թ. 004-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնքի, գ. Փարաքար, Ս. Պտրոսյան փողոց 8 տուն հասցեում/ ստացել է համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 19-ի թիվ 2191 ծանուցումը, 2023 թվականի հուլիսի 24-ին ներկայացել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան, ներկայացրել պարտավորությունը մասնակի կատարելու վերաբերյալ վճարման անդորրագրեր: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Ռուդիկ Շահբազյանյանի 2023 թվականի հուլիսի 24-ի 2914 դիմումը. **որոշում եմ՝**

1. Ռուդիկ Շահբազյանի հետ կնքել պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց՝ 4 ամիս ժամկետով, համաձայն հավելվածի:
2. Ռուդիկ Շահբազյանի նկատմամբ՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Ս. Պետրոսյան 8 հասցեում գտնվող անշարժ գույքի 2021-2023թթ. համար հաշվարկված անշարժ գույքի հարկի մասով 22023 /քսաներկու հազար երեսուներկու/ ՀՀ դրամ և 04-094-031-003 կադաստրային ծածկագրով 0,151 հա տնամերձ հողամասի հողի հարկի գշով 2008-2020թթ. համար 01.08.2023թ. դրությամբ հաշվարկված 77959 /յոթանասունյոթ հազար ինը հարյուր հիսունինը/ ՀՀ դրամ, ընդհանուր 99991 /իննսունինը հազար ինը հարյուր իննսունմեկ/ ՀՀ դրամ պարտավորության գանձման նպատակով հարուցված վարչական վարույթը կասեցնել 2023 թվականի օգոստոսի 14-ին կազմված ժամանակացույցի վերջնաժամկետով՝ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 15-ը:
3. Ժամանակացույցով սահմանված վճարման ժամկետները խախտելու դեպքում վերսկսել վարույթը:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին Ռուդիկ Շահբազյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

